

Ըրբբբբբբբբբբբբբբբբ
 Ծաբբբբբբբբբբբբբբբ
 Ծաբբբբբբբբբբբբբբբ
 Ղեբբբբբբբբբբբբբբբ
 Ղբբբբբբբբբբբբբբբ
 Ծաբբբբբբբբբբբբբբբ
 Կաբբբբբբբբբբբբբբբ
 Կաբբբբբբբբբբբբբբբ
 Մաբբբբբբբբբբբբբբբ
 Ըաբբբբբբբբբբբբբբբ


ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԶԱԿՅԱՆ

հատընտիր

հանգստանձնարարի բնկապետ
 Ղբբբբբբբբբբբբբբբ

ժողովածուն հրատարակվել է
 Արամայի Սահակյանի 80-ամյակի կապակցությամբ

ԱՐԱՄԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆ ՂԵԽՈՂՆՈՒՄ



ԱՐԱՄԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆ հատընտիր

ԵՐԵՎԱՆ 2016





**ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՏԱԿՅԱՆ
ՏԱՏԵՆՏԻՐ**

*Ժողովածուն հրատարակվել է
Արամայիս Աստուխյանի 80-ամյակի կապակցությամբ*

Երևան 2016

Չեղինակային հրատարակություն





**Սահակյան Արամայիս
Բանաստեղծություններ
0000 էջ**

**Ժողովածուն իր մեջ պարունակում է հայտնի
բանաստեղծ, երգիծաբան, «Ոգնի» երգիծական
հանդեսի գլխավոր խմբագիր Արամայիս Սահակյանի
լավագույն բանաստեղծությունները, գրված տարբեր
ժամանակներում**

ՁԵՉ ՀԵՏ, ԱՐԴՅՈՔ, ՉԻ՞ ՊԱՏԱԽԵԼ

ոռնոռնՁահել սիրտ ես, վճիտ ու պարզ,
Ու աղբյուրի նման մաքուր
Դու սիրում ես աշխարհում այս
Տուն, հարազատ եւ մայր ու քույր:
Բայց լինում է՝ սիրո բոցը,
Դող է բերում սրտիդ քահել,
Ուրիշ է, ախ, այդ դողոցը,
Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել:
Եվ առաջին անգամ կյանքում
Միասին եք քեզ հետ է նա,
Սիրտդ լիքն է ամեն ինչով,
Բայց խոսելու ոչինչ չկա:
Մոտենում ես նրանց տանը,
Ինչպե՞ս ասել, ինչպե՞ս պահել,
Այնքան լավն է այդ վայրկյանը,
Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել:



Պատահում է, որ դու կամ նա
 Թեւածում եք հեռու, հեռու
 Ու լավ գիտեք ուր եք հիմա,
 Գիտեք, երբ եք հանդիպելու,
 Բայց ամեն պահ եւ անընդհատ
 Սպասում եք դուք անհամբեր...
 Այնպես լավն է սպասումն այդ,-
 Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել:

Կյանք է...մեկ էլ տեսար հանկարծ
 Խռովում եք ինչ-որ բանից,
 Հեռանում եք դուք կամ անդարծ
 Կամ դեռ հույսեր պահած նորից:
 Լուռ նայում եք դուք իրարու,
 Իբրև ոչինչ չի կատարվել,
 Բայց լալիս եք հեռվից հեռու
 Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել:

Դու այստեղ ես տխուր թախծում,
 Նա այնտեղ է լուռ հառաչում
 Եվ տեսում եք, որ ամենուր
 Ձեր սրտերն են իրար կանչում,
 Հնին ծոված նոր կրակը
 Դարծ եք ուզում դուք կատարել,
 Ուրիշ է այդ հաղթանակը
 Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել:
 Ախ, երանի սիրո ծովում
 Լավն ու բարին այնքան լինեն,
 Որ հեռացվեն, որ մոռացվեն
 Թախիծ բերող վշտերն ամեն
 Ու մեկմեկու երբ հանդիպենք՝
 Հպարտ ասենք՝ սիրահարներ,
 Այս լավ դեպքը, այս լավ պահը
 Ձեզ հետ, արդյոք, չի՞ պատահել...



ԿՅԱՆՔՆ ԷԼ ՆՄԱՆ Է ԱՅՍ ԱՎՏՈՐՔՈՒՄԻՆ

Կյանքն էլ նման է այս ավտորքուսին,
 Ոմանք իջնում են, ոմանք բարձրանում,
 Ոմանք նստած են անհոգ ու հանգիստ,
 Ոմանք կանգնելու տեղ են դրոնում:
 Ոմանք դռներից կախվել են հագիվ,
 Ոմանք գնում են միայն մեկ կանգար,
 Կյանքն էլ նման է այս ավտորքուսին,
 Պետք է վճարես գնալուդ համար:
 Հողագնդի պես օրորվում կամաց,
 Գնում է գալիս՝ նոր մարդկանցով լի,
 Ու եթե վթար պատահի հանկարծ,
 Կանգնած ու նստած՝ էլ չի հարցնի...
 Կյանքն էլ նման է այս ավտորքուսին,
 Եկեք մտածենք ապրելու մասին:

ՁԱՅԵԼՈՒԹՅԱՆ ՃԱՄՓԻ ՎՐԱ

Ձառելության ճամփի վրա
 Հանդիպում ես հանկարծ մեկին.
 Զեզ գերում է տեսքը նրա,
 Կամ գերում է նրա հոգին:

Միանգամից սիրտ ու աշխարհ
 Դառնում են նոր,արտասովոր:
 Եվ նա, ով դեռ չկար,
 Ամբողջ կյանքդ է դառնում այսօր:

Հրդեհում են հոգիդ հանկարծ
 Մի լուռ հայացք,ժպիտ մի տաք,
 Մի ծաղկեփունջ քեզ ուղարկված,
 Մի անծնվեր ու լավ արարք,

Հեռու-հեռվից գալը մեկի,
 Ձերմ համբույրը մի բախտավոր,
 Կամ թե մեկի ապրած կյանքի
 Պատմությունը խորհրդավոր...





Թերեւ քայլից հաճախ կյանքում
Սեր է ծնվում հարուստ եւ մեծ,
Որ դու անգամ չես հասկանում
Ինչպես եղավ ու պատահեց:

Աջիատում ես էլ չհիշել,
Բայց նորից ես հուշով տարվում,
Իսկ երբ հանկարծ մերժում է քեզ
Ավելի ես սիրահարվում...

)Չես էլ կարծում,թե այս մեկին
Դու կարող ես նայել անգամ,
Բայց լինում է,որ միասին
Ու մեկտեղ եք անցնում ճամփան,

Կամ մեկի հետ ինչ-որ մի տեղ
Ինչ-որ խոսք եք փոխանակել,
Տարիներ են անցել արդեն,

6

Բայց դու նրան հիշում ես դեռ:
Մեկին իբր սիրահարված
Կատակելով սեր ես հայտնում,
Բայց կատակը կամաց-կամաց
Լրջություն է մի օր դառնում:

Կամ մեկի հետ վիճում ես դու,
Կռվում,խայթում անգթաբար ,
Մինչդեռ հետո,հեռվից-հեռու,
Կարոտով եք հիշում իրար:

Շատ են խոսում մեկի մասին,
Եվ հուզվում ես դու գաղտնորեն,
Մեկն էլ նման քո երագին,
Ստիպում է նայես իրեն....

Մեկն օգնում է, գնում անդարձ,
Փնտրում ես նրան սիրով,
Եվ սիրում ես նաեւ հանկաձ

7





Ինչ-որ մեկին կարեկցալով...
 Պատահում է չեք ճանաչում,
 Բայց նայում եք հանկարծ իրար,
 Եվ զգում եք,որ աշխարհում
 Դուք ծնվել եք միմյանց համար:

Հաճախ երզը մեկտեղ լսած,
 Կամ կատակը մի հասարակ,
 Մի կարծիքը նրա հայտնած
 Հրդեհում են սրտեր ու կրակ:

Կյանք է...Չեռք է ծեռքի դիպել,
 Կամ ակնարկ են արել սիրով,
 Սիրվելուց է մեկը սիրել,
 Մեկն էլ միայն նամակներով,

Եվ սիրում է մեկն էլ բոլոր
 Հմայքներով նրա անմար...
 Իսկ ես չեմ սիրում,չեմ սիրում խոր,



ԵՐԳ ՉՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բայց չգիտեմ ինչի համար...
 Երբ դուրս ես եկել նրա հետ փողոց,
 Բայց ոչինչ չունես արդեն ասելու,
 Երբ էլ չես զգում մի ջերմ թրթռոց,
 Եվ շատ է թվում ճամփան՝ անցնելու,
 Երբ թեթե խոսքից վատ ես զգում քեզ
 Ու նեղանում ես, զայրանում վրան,
 Թեկուզ ես հետո գրկես, համբուրես,
 Չգա,որ արդեն չես սիրում նրան:

Երբ այն գրքերը, որ նա է կարդում,
 Դու չես շտապում անհամբեր կարդալ,
 Երբ այն. ինչ նա է սիրում, կարոտում,
 Սիրով չես նայում ու մտերմաբար,
 Երբ միայն-միայն նրան գրկելիս
 Սիրահարված ես զգում անսահման,
 Երբ չես կարոտում՝ դեռ բաժանվելիս,
 Չգա,որ արդեն չես սիրում նրան:





Սերն ուրի՛ջ բան է ...Ու երբ դու թաքուն
քո աջխարին ունես, գաղտնիքները քո,
երբ առանց նրա կարող ես կյանքում
երջանիկ լինել քո հարկի ներքո,
Համեմատում ես երբ նրան անվերջ,
երբ նկատում ես, որ լավերը կան,
երբ նա միանկ չէ աջխարհում, քո մեջ-
ՉԳՎ, ՈՐ ԱՐԴԵՆ ՉԵՍ ՍԻՐՈՒՄ ՆՐԱՆ...

ՄԻ ՓԱԿ ՏԵՂ Է ՀԱՐԿԱՎՈՐ

Մի փակ տեղ է հարկավոր,
Որ իմ սիրտը բացեմ քեզ,
Մի մուգ տեղ է հարկավոր,
Որ պայծառ լույս վառեմ ես:
Մի գովիր իմ աչքերը,
Ուր ժպիտ կա, նաև վիշտ:-
Սիրահարի աչքերը
Գեղեցիկ են լինում միշտ:





ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Ահա քո սուրճի մրուրը սև
 Եվ պարզ նշաններ կյանքիդ մասին
 Ինչքան շատ բան ես դու երագել,
 Բայց դեռ չես հասել նույնիսկ կեսին:

Կյանքից դու մերթ գոհ ես մնացել,
 Մերթ էլ դժգոհ ես եղել իրավ,
 Ոմանք կյանքում քեզ չեն հասկացել,
 Ոմանց էլ դու չես հասկացել լավ:

Հաճախ քեզ քիչ են գնահատել
 Եվ նախանձել են երբեմն քեզ,
 Դու սիրել գիտես, նաև ատել,
 Բայց ավելի շատ դեռ կսիրես:

Հուսահատվել ես երբեմն շատ,
 Վայրկյաններ ապրել հակասական,
 Եվ տխրությունն ու ծիծաղն ազատ
 Քո ուղեկիցներն են մշտական:

Քիչ բան չես տեսել կյանքում իրավ
 Եվ զուր չես ծնվել դու աշխարհում,
 Իսկ լավ պահերը, օրերը լավ
 Դեռ առջևում են, դեռ առջևում...





ՄԱՔՈՒՐ ԱՐՄԱՏ

Մի լավ ուսուցիչ

Սիրտդ ինչպե՞ս ազնիվ մնաց նենգ աշխարհում,
Ոգիդ ինչպե՞ս անմեղ մնաց մեղք աշխարհում:
Նրանից է, որ դու ունես մաքուր արմատ:
Այդ արմատով պիտի ապրենք մենք աշխարհում:

ԱՇԽԱՐՀԻ ՅՈԹ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

Եւ բուրգերը եգիպտական,
Եվ տաճարը Արտեմիսի,
Չնսի արծանն Օլիմպիական
Եվ կոթողը Հռոդոսի,
Դամբարանը Մավզոլոսի,
Այգիները Բաբելոնի,
Եվ փարոսը Ալեքսանդրիայի՝
Շահտ եւ հայտնի:

Աշխարհի յոթ հրաշալիք...
Հմայել էք դուք մշտապես:
Բայց կա յոթ էլ հրաշալիք
Որ չի՛ նշվում պաշտոնապես:
Առաջինը հենց նա՛ր է, ով
Հրաշալիքներն ստեղծե՛ց այդ:
Նա իր ոգով եւ հանճարով
Կոչվում է Մարդ:





Եվ կա երկրորդ հրաշալիք,
 Նա է, ով մեզ աշխարհ բերում
 Եվ ոչ մեկիս ոչ մի անգամ
 Ոչ մի վայրկյան չի մոռանում:
 Աշխարհն էլ մեզ դավաճանի,
 Նա կանգնած է միշտ մեզ համար:
 Հրաշալիքն այդ սիրելի
 Կոչվում է Մայր:

Եվ կա երրորդ հրաշալիք:
 Նա է, ով որ աշխարհ գալիս
 Եվ իր տեսքով, անմեղությամբ
 Նոր իմաստ է կյանքին տալիս:
 Նա մեր հոյսն է անմահության,
 Երկրորդ կյանքն ու հավատն է մեր,
 Հրաշալիքն այդ աննման
 Մանուկն է ձեր:

Եվ կա չորրորդ հրաշալիք.
 Այն է, ինչը մեզ այցելում
 Եվ փոխելով սիրտ ու հոգի՝
 Ուրիշ մարդ է մեզ դարձնում:
 Նրա ուժը մե՞ծ, ազդեցիկ
 Ձեզնից ո՞վ չի, արդյոք, տեսել:
 Հրաշալիքն այդ գեղեցիկ
 Կոչվում է Սեր:

Կա հինգերորդ հրաշալիք.
 Այն է, ինչը տիեզերքում
 Որքան գիտենք՝ առայժմ կա
 Միայն երկիր մոլորակում:
 Եվ հենց նրա՝ շնորհիվ է,
 Որ մենք ահա ապրում ենք, կանք:
 Հրաշալիքն այդ հազվագյուտ
 Կոչվում է Կյանք:





Կա վեցերորդ հրաշալիք.
 Մի հասարակ, աննկատ բան,
 Բայց երբայմբ իր անհանգիստ`
 Տիեզերքից էլ անսահման:
 Ամեն ինչ էլ զգում է նա,
 Թեև իր հետ վարվում ենք բիրտ:
 Հրաշալիքն այդ տառապյալ
 Կոչվում է Սիրտ:

Եվ, վերջապես, կա յոթերորդ,
 Բայց` առաջին հրաշալիք -
 Մի սրբություն` առանց որի
 Իրենց ո՞րք են զգում մարդիկ,
 Իսկ նրա հետ` մե՞ծ ու հզոր,
 Իսկ նրա հետ` հաղթանակորդ: -
 Հրաշալիքն այդ կոչվում է
 Հայրենի հող:

Եվ ուզում եմ, ուզում եմ ես
 Մի լրացում անել վերջին -
 Հրաշալիք կոչենք նույնպես`
 Ամեն մեկս մեր ուսուցչին...
 Կարելի է այս աշխարհում
 Ապրել նաև առանց բուրգի:
 Անհնար է սակայն ապրել
 Առանց լույսի, հայրենիքի:





ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Արդյոք ինչո՞վ է կյանքը գեղեցիկ.
Մանուկներով է կյանքը գեղեցիկ:

Գեղեցիկ է նա եւ հրաշալի՝
Սիրահարներով ամբողջ աշխարհի:

Գեղեցիկ է նա ուսուցիչներով՝
Հոգեկան ու նուրբ սնուցիչներով:

Գեղեցիկ է նա ուսանողներով,
Մեր ծնողներով, մայրական սիրով:

Եվ ճերմակաւեր, նաև ազդեցիկ
Ծերուկներով է կյանքը գեղեցիկ...

ՎԵՐՁԻՆ ՉԱՆԳԸ

Քիչ է լինում, երբ նույն պահին՝
եւ ուրախ եւք, եւ տխուր եւք:
Հենց այդպիսի վայրկյան է մի՝
դպրոցական վերջին զանգը:
Ուրախ եւք, որ ավարտում եւք:
Տխուր եւք, որ ավարտում եւք:
Ասես լաց ու ծիծաղ լինի
դպրոցական վերջին զանգը:
Եկանք այստեղ յոթ տարեկան,
տասնյոթ եւք գնում սակայն:
Ասես լինենք կայարանում,
եւ պատրաստ է մեր գնացքը...
Փոքրիկ էինք, անմե՛ղ, արդար:
Հիմա մե՛ծ եւք, հակասական.
Հասունության նախերգանքն է
դպրոցական վերջին զանգը:





Շատ սիրելի ուսուցիչներ,
 մենք գնում ենք, դուք մտնում եք:
 Եվ վառվում է մեր սրտերում
 պատանեկան ափսոսանքը,
 Որ ձեզ հաճախ չենք հասկացել,
 չենք մտածել՝ մեծանում եք,
 Եվ ձեր կյանքն էլ կարճ է, ինչպես...
 դպրոցական վերջին զանգը:

Ներողություն, ներողություն,
 որ տվել ենք ձեզ ներողություն:
 Թե ջնդուկվենք ինստիտուտներ,
 դուք չտիրեք՝ բարդ է կյանքը:
 Սակայն ինչ էլ դառնանք կյանքում,
 ապրելու եք դուք մեր հոգում,
 Եվ մեր հոգու ձայնն է ասես
 դպրոցական վերջին զանգը:

Ախ, մեզ համար ամենամեծ
 դասամիջոցն սկսվում է...
 Սակայն միթե կմոռացվի՝
 մեկտեղ ապրած տասնամյակը:
 Հրաժեշտ ենք տալիս մենք ձեզ,
 բայց հուշերին՝ անհնար է,
 Եվ ավելի թող մեզ կապի
 դպրոցական վերջին զանգը:

Հողագունդը մի մեծ զանգ է՝
 տիեզերքի անհունում խոր:
 Թող միջտ լսվի նրա ձայնը,
 թող չավերի նրան զենքը...
 Մենք չենք ուզում, որ աշխարհի
 վերջին զանգը հնչի մի օր:
 Այս աշխարհում թող հնչի լոկ
 Դպրոցական վերջին զանգը:





ՄԱՉՎԱԾ ԳՐՔԵՐ

Մաշված գրքեր, մաշված գրքեր,
Գրքեր դեղևած ու անջուր:
Որքան մտքեր, որքան կրքեր
Եվ ընկերների ունեք դուք:

Մվ իմանա՝ լուռ ու անքուն
Մմ եք վառել, ո՛ւմ գերել,
Եվ քանիսի՛ սրտին, հոգուն
Վիշտ ու ժպիտ եք բերել:

Բարակ, տանջված ձեր թերթերին
Մվ է արցունքն իր թողել,
Մվ է գրել ձեր էջերին
Երախտիքի քերմ տողեր:

Գրքեր, երևե՛կ լինեմ ձեզ պես՝
Օգնե՛մ, հոգնե՛մ օր-օրին,
Միայն հոգուս գանձերն ամբողջ
Տամ բոլորին, բոլորին:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երբ հեռու տեղից գալիս եմ գյուղ,
Մի ծանոթ հույզ է սիրտս պատում,
Եվ միշտ աղմուկով ու աներկյուղ՝
Ինձ մանուկներն են շրջապատում:

Թողած խաղերը, թողած հեռուն,
Հավաքվում են իմ շուրջը սրտանց,
Նրանք լավ գիտեն «Արմո քեռուն»,
«Արմո քեռին» էլ գիտե նրանց:

Նայում եմ ես այդ փոքրիկներին
Ու նախանձում եմ նաև մեկ-մեկ.
Նրանք կհասնեն իմ տարիքին,
Իսկ ես չե՛մ հասնի նրանց երբեք...





Աստր դարում սեր երգեցին՝ Քուչակ, Սայաթ-Նովա,
Ֆրիկն ընդդեմ դարի ելավ, Թնդրակեցին ելավ:
Ելան Տարոն, Չեյթոնն, Սասոնն, եւ Սյունիքը ելավ,
Մարգպետունու, Պահլավունու, Դավիթ-Քելի երկիր:

Քո ավյուով ու հավատով հասար բախտին քո մեծ,
Օրինեց Օրին, Աբովյանը եւ Թումանյանն օրինեց,
Օնվեց Տերյան, Կահակյան,
Համբարձումյան, Չարենց...
Շահումյանի, Անդրանիկի, Բաղդամյանի երկիր:

Տուն եւ գալիս որդիներդ՝ Ողիսևսի նման,
Աջքերի մեջ օտար ծովեր, հոգիներում՝ Սևան,
Խաչատրյան տվեցիր դու, ապա՝ Մինաս, Սարյան...
Սարոյանի, եւ Սևակի, եւ Շիրազի երկիր:

Շանո եւ լացել, շանո եւ թախծել, հիմա ցնծա՛, երգի՛ր,
Բոլոր ցրված որդիների հավատարիմ երկիր,
Այնքան փոքր ես՝ մի համբույրի տեղ ես միայն, երկիր,
Խաղաղության, Երջանկության, Անմահության երկիր:

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Ես իմ անուջ Հայաստանի
ջարենցահամ բառն եմ սիրում,
Եվ Չարենցի մեծ քնարի
ազատածայն լարն եմ սիրում,
Լուսամփոփի պես աղջկան՝
աստվածամոր իր աջքերով,
Եվ գյոզալի Էջիսից երված
Սայաթ-Նովյան տաղն եմ սիրում:

Սիրում եմ իր գրիչը սուր,
երգերը հուր՝ սիրտս գերող,
Կապուտաջյա հայրենիքի ողջակիզված կրակն այրող,
Դանթեական դժոխքներից
դեպի լյարն Մասիս ձգվող՝
Խելագարված ամբոխների
արևային պարն եմ սիրում:





Ո՛ր ել լինեմ, չեմ մոռանա
 եւ գանգրահեր այն տղային,
 Չեմ մոռանա աղոթք դարձած
 «Ես իմ անուշ Հայաստանին»,
 Ինչքան էլ սուր սիրտս խոցեն
 բարեկամը եւ թշնամին,
 Էլի ես մեր՝ սուրբ քերթության
 կարկտահար ծառն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար
 ոչ մի ուրիշ բարձունք չկա,
 Կոմիտասի, Չարենցի պես
 լուսապսակ արցունք չկա,
 Աջխարի անցիր, առանց ոգու՝
 ոչ մի ազնիվ արդյունք չկա,
 Որպես անհաս փառքի ճամփա՝
 ես իմ Չարենց սարն եմ սիրում:

ԳՆԴԱԿԸ ՄՐՏՈՒՄ

Հր. Հովհաննիսյանին

Քո մեջ, կռվի տարիներից,
 Մի գնդակ կա թշնամական:
 Այդ գնդակը հուզում է ինձ,
 Ինչպես հողում դրված ական:
 Թե սիրային երգ գրելիս,
 Թե խոսելիս, թե երգելիս,
 Ես տեսնում եմ այդ գնդակը՝
 Քո սրտի մեջ վերք գրելիս:
 Ես չեմ եղել պատերազմում,
 Բայց տեսել եմ հազար անգամ,
 Թե ինչպես են իմ դեմ սուրում
 Գնդակները մեր գրական...
 Այո, կյանքը պայքար է մեծ,
 Ուստի միշտ էլ զինվոր ենք մենք: -
 Մի գնդակ կա քո սրտի մեջ,
 Իմ սրտի մեջ՝ հազար ու մեկ...





ԵՍ ԶՈ ՉԱՎԱԿՆ ԵՄ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ես քո զավակն եմ, Հայաստան,
Դրա համար եմ... հայ այսքան:
Հավերժ զինվորն եմ հայոց տան,
Ես քո զավակն եմ, Հայաստան:

Իմ զարմանալի բարոյությամբ,
Թշնամու հանդեպ չարությամբ,
Իմ այս մարդասերի հայությամբ՝
Ես քո զավակն եմ, Հայաստան:

Լինելով այդքան ազգային,
Սիրում եմ արդար ազգերին,
Բայց քո ծառան եմ եւ գերին,
Ես քո զավակն եմ, Հայաստան:

Իմ քնարական երգերով,
Իմ հին-հայկական վերքերով,
Իմ կատակներով, գրքերով՝
Ես քո զավակն եմ, Հայաստան:

Ինչ էլ անում եմ, իմ անզին,
Մի խոսք է ասում իմ հոգին.
«Իսկ դա օգո՞ւտ է իմ երկրին...»:
Ես քո զավակն եմ, Հայաստան:

Միայն քեզ համար մեռնեմ թող:
Ու երբ որ հանգչեմ, իջնեմ հող,
Թող շիրիմիս գրվի... լոկ մի տող.
«Ես քո զավակն եմ, Հայաստան»:





ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայն իր մանկանը կոչել է Ազատ,
Որ ազատ լինի հողը հարազատ:

Բայց հարձակվել են վայրենի՜ մարդիկ,
Եվ նա զավակին կոչել է Մարտիկ:

Երկիրն է պղծել թշնամին հրեջ,
Եվ հայրը որդուն կոչել է Վրեժ:

Որպեսզի որդին կռվի տաքարյուն,
Հայրը ծնվածին կոչել է Կորյուն:

Նահատակներ են պետք եղել հերոս,
Եվ նոր անուն է գտել՝ Մարտիրոս:

Որպեսզի երկիրն արնի հարություն,
Հայրը կոչվել է նաև Հարություն:

Լավ լուրերի է սպասել հավետ,
Եվ իր մանչուկին ասել է Ավետ:

Որ ազգը կռվի եւ մնա սակայն,
Որդուն կոչել է նա Մնացական:

Հույսով է ապրել մթնում խաբուսիկ
Եվ անվանել է իր որդուն Հուսիկ:

Այժմ հայն ունի բախտավոր՝ մի կյանք
Եվ զավակներին անվանում է Հայկ...





ԼՈՒՍԻՆ

Լուսին, հին ես, ինչպես
 Ժողովուրդը հայոց,
 Լուսին, փոքրանում ես
 Ու մեծանում ահա,
 Ի՞նչ պատահեց սակայն
 Ժողովրդին հայոց,
 Որ առաջվա նման
 Չի մեծանում հիմա:

Դու կիսվում ես, լուսին,
 Ապա լրիվանում,
 Իսկ մի կիսված երկիր
 Ե՞րբ է լրանալու,
 Բախտ ու լեզու կիսված -
 Երկու ջուրթեր կիսված
 Ե՞րբ են միանալու,
 Ե՞րբ են համբուրվելու...

Մարդիկ լրիվ սրտով
 Հագիվհա՛գ են ապրում,
 Իսկ մենք կիսված սրտով
 Այս ինչպե՞ս ենք ապրում:
 Ու ապրում ենք եթե
 Այսպես կիսված սրտով,
 Ապա ինչպե՞ս կապրենք
 Արդեն լրիվ սրտով...

Ժողովուրդն իմ, լուսին,
 Զեզևից մե՛ծ էր նույնպես,
 Շանճ էր եւ աստղերից,
 Բայց ի՞նչ մնաց, գիտե՛ս:
 Նա նման է հազիվ
 Զո փակագիծ-եզրին,
 Որ աշխարհի հանդես
 Հարցական է կարծես:



Ամպի տակ ես մտնում
 Ու ելնում ես էլի,
 Մեր կեսն ամպի տակ է,
 Իսկ ե՞րբ պիտի ելնի:
 Արեգակն էլ, գիտես,
 Մայր է մտնում, ելնում,
 Իսկ ե՞րբ պիտի ելնես
 Երկու միլիոն արև...

Ու ոնց դո՛ւ ես լույսդ
 Արեգակից առնում,
 Այդպես մյուս կեսն է
 Մեր արևից վառվում:
 Ու երկիրը կհսված
 Թող երևա նրանց,
 Ում դրոշի վրա
 Մի լուսին կա կհսված...

Հասկանո՞ւմ ես, լուսին,
 Սուրը զարդեց լույսի՛ն:
 Եվ դրոշին նրանց
 Դու նման չես լուսնի,
 Նման ես կեռ սրի
 Եվ կեռ յաթաղանի,
 Որ այդպես է թվում
 Արդեն քանի՛ տարի:

Դու մեզ ների՛ր, լուսին,
 Որ հուզված ենք այսպես,
 Մեզ հուզել են, լուսին,
 Եվ թողել են մեզ կես:

Միշտ նայում են հեռվից
 Լավ նկարին պատի,
 Բայց ուզում ենք մոտի՛ց
 Նայել Արարատին:
 Դա լուկ հարց չէ սարի,
 Այլ դա հարցն է Դանի -
 Ինչ մեզ եղավ, թող որ
 Այլոց չպատահի՛:





Նայում ենք քեզ, լուսին,
 Եվ ամպ չկա երկնում,
 Լոկ մի ամպ կա, լուսին,
 Ամեն ազնիվ հոգում:
 Դու հայ հոգու նման
 Բզկտված ես, շիկնած,
 Կողքիդ աստղերն ասես
 Չայ մարդիկ են ցրված:

Մի օր պիտի հերկենք
 Քո դաշտերը վայրի,
 Իսկ ե՛րբ պիտի հերկենք
 Դաշտերն Ավարայրի:
 Քո երեսը մյուս
 Մենք տեսել ենք, լուսին,
 Իսկ ե՛րբ պիտի տեսնենք
 Այն երեսը Մասսի:

40

Լուսինն այդքան հեռու,
 Մարդու ո՛րք է հասել,
 Մասիսն այսքան մոտիկ,
 Դեռ չենք կարող հասնել:
 Ախ, մեզ պետք է, հոգին,
 Մարել մի հի՛ն կարոտ -
 Կամ դո՛ւ արի, Մասիս,
 Կամ թե՛ մենք գանք քեզ մոտ:

Մնանք վաղվա հույսին:
 Բարի գիշեր, լուսին:

41





ՀԱՅՈՑ ԿԱՆԱՅՔ

Ախ, ո՞ւմ յարն է պանդուխտ եղել,
Ռ՛վ է այդքան արցունք հեղել,
Ռ՛ւմ որդուն են գրկից խլել,
Ի՞նչ են երգել հայոց կանայք:

Իրենց ջանն են խոնարհ պահել,
Բայց թշնամուն չեն խոնարհվել,
Հավատարիմ ծո՛ղ են եղել
Հայոց նավին հայոց կանայք:

Մենք ձեր պարտքը ե՛րբ պիտի տանք,
Հայոց կանայք, հայոց կանայք:

ԳԱԼԻՍ Է ՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Գալիս է մի ժամանակ,
Որ գավակը քո թանկ
Ուրիշներին աջխարհում
Ավելի է սիրում:

Մոռանում է լիովին
Տառապանքդ խորին:
Իրեն զգում է իրոք
Քեզանից էլ խելոք:

Գալիս է մի ժամանակ,
Որ գավակը քո թանկ
Քեզ չի ուզում տեսնել իր
Շրջապատում ընտիր:

Բայց եւ գալիս է արագ
Այնպիսի ժամանակ,
Որ նա զղջում է, տխրում,
Սակայն դու չես լինում...





ԱԻՆ, ՄԱՅՐԵՐ, ՄԱՅՐԵՐ

Աիւ, մայրեր, մայրեր,
 Չոհերի մայրեր,
 Հնարավոր է
 Ձեր վիշտը մարել:
 Ինչի՞ համար եք
 Օսել որդիներ,
 Որ այս աշխարհից
 Հեռանան ջահե՛լ:
 Նրանք զոհվեցին,
 Հեռացան անդարձ:
 Բայց թվում է ինձ,
 Թե դուք եք զոհված:
 Ապրում եք, սակայն
 Թվում է՝ չկա՛ք:
 Աիւ, մայրեր, մայրեր,
 Մայրեր նահատակ...

ՈՒՇԱՆՈՒՄ ԵՔ, ՏՂԵՐՔ, ՈՒՇԱՆՈՒՄ ԵՔ

-Դուք գնացիք կռիվ եւ ասացիք՝ կգանք:
 Ուշանում եք, տղերք, ուշանում եք:
 Դուք գնացիք դասից, եւ էլ դասի չեկա՛ք:
 Ուշանում եք, տղերք, ուշանում եք:

-Մենք գնացինք կռիվ եւ ասացինք՝ կգանք,
 Էլ չսպասե՛ք երբեք, էլ չսպասե՛ք:
 Ուրի՛շ մի դաս տվինք ոսոխներին անարգ,
 Եվ դեռ ջահե՛լ-ջահե՛լ զոհվեցինք մենք:

Մեզ բացակա դրեք, բայց...հարգելի՛ արդեն:
 Մեր կենացն էլ մեկ-մեկ դատարկեցեք:
 Հարգելի պատճառով պատերազմից չեկանք:
 Եվ ներեցե՛ք դուք մեզ, եւ հարգեցեք:





Մեր փոխարեն, անջուշտ, նոր սերունդ է աճել,
 Պահպանեցե՛ք նրան եւ սիրեցե՛ք:
 Դուք երջանիկ եղե՛ք: Իսկ մայրերին մեր ծեր`
 Մեր փոխարեն մեկ-մեկ այցելեցե՛ք...

Մենք էլ կապրենք այսպես:

Մենք էլ` կարո՛ւտ միշտ ձեզ:

Էլ չսպասե՛ք արդեն, էլ չսպասե՛ք:

-Ո՛հ, կսպասենք մենք ձեզ,

միշտ կսպասենք մենք ձեզ,

Ուշանում եք, տղերք, ուշանում եք...

ՈՒՐ ԵՔ, ՏՂԱՆԵՐ

Կյանքում կա արև ու լույս
 Եվ սեր ու ծաղիկ,
 Բայց նաև կա փո՛ւջ,
 Մահ ու փոթորիկ:
 Սրտում մեր երա՛զ է միշտ,
 Հուր է ու խայտանք,
 Բայց նաև կա վի՛շտ,
 Յարձ ու տառապանք:

Ո՛ւր եք, տղաներ,
 Որ ելաք մարտի:
 Ինչո՞ւ կյանք ու սեր
 Դարձան մահ, ավեր`
 Ձեռքով տմարդի:
 Օ՛հ ե՛նք թողնի վառվի
 Մի նոր հրդեհ կռվի
 Եվ ինչ եղավ ձեզ հետ`
 Մեզ հետ էլ կատարվի...





Մարդիկ կան անթիվ հիմա,
Բայց չկան նրանք,
Որ մարդկանց համար
Կյանք են գոհել թանկ:
Ամեն տեղ համբույր ու սեր
Եվ բախտ ու հույսեր,
Բայց ամենը այս
Դուք չե՞ք տեսնի էլ:
Ո՛ր եք, տղաներ....

ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ԲԱՆ ԿԼԻՆԵՐ

Չլինեին վատ մարդիկ,
Քեն ու դավեր, կռիվներ,
Մարդն ավելի երջանիկ
Ու բախտավոր կլիներ:

Ու խորհում եմ ես էլի
Ափսոսանքով, ցավով լի.
-Ինչքան շատ բան կլիներ,
Եթե շատ բան չլիներ...





ԱՐԾՎԱԾԵՆ

*Դու ուսուցիչ, ես՝ աշակերտ,
Իմ Արծվաջեն, իմ Ազնվաջեն...*

Հայաստանի քարտեզում,

Սևան լճից այն կողմ, տես,

Սահմանից դուրս կա մի գյուղ՝

ասես կղզի՝ սրտի պես:

Եթե եղել եք այնտեղ,

Նախանձում եմ ձեզ արդեն:

Դա հին Բաջբենդ գյուղն է մեծ,

որ կոչվում է Արծվաջեն:

Այնտեղ սարեր կան սիրուն,

պաղ աղբյուրներ ու ջրվեժ:

Շիրիմներ կան դարավոր,

որ ապրելու են հավերժ:

Եկեղեցի կա փոքրիկ՝ նոր անտառներ սլացիկ,

եվ մի լճակ գեղեցիկ, որ սարքել են գյուղացիք:

Կա գոհվածի հուշարձան

(տղերքն ինչո՞ւ ուջացան...),

Անուններ կան գեղեցիկ՝

Չամչի աղբյուր, Չնգան քար:

Ավանդական կարգ ու ծես՝

դեռ հարգի են, ազդեցիկ: -

Որտեղ չկա առուծախ,

այնտեղ ազնիվ են մարդիկ:

Գյուղն է կոչվում Արծվաջեն,

արծիվ չկա բայց այնտեղ:

Այնտեղ մարդիկ են արծիվ,

որ սիրում են աշխատել:

Բուլորինն է հյուրն ասես,

ձեռքից-ձեռք են խլում միջո:

Եվ թող մարդիկ լավ ապրեն,

ախր շատ են տեսել վիշտ:





Գյուղը ջուհի անցյալի
 հայտնի այրեր պատմական,
 Գանձեր ջուհի բաղձալի,
 հայտնի վայրեր պատմական,
 Բայց հողը, որ հերկվում է,
 հայրենի՛ է դարավոր,
 Իսկ հայրենի հողն ի՞նչ է՝
 միակ գանձն է զորավոր:

Ես ծնվել եմ այդ գյուղում:
 Ես ապրել եմ այդ գյուղում:
 Հիմա որպես մի որդի՝
 այս խոսքերն եմ քեզ ուղղում.
 Ախ, երանի միջտ ապրեմ
 այնպես ազնիվ ու մաքուր,
 Որ քո փառքին, Արծվաջեն,
 բերեմ արծվի մի փետուր...

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ձինջ ու անքուն ծո՛ղ էիր,
 Կյանքի այգում հո՛ղ էիր,
 Հիմա, երբ որ դու չկաս,
 Նո՛ր եմ զգում՝ ո՛ղ էիր:

Դու իմ սե՛րը իմ սրտի,
 Միակ տե՛րը իմ սրտի,
 Սակայն ինչո՞ւ՝ չգիտես
 Սահմանները իմ սրտի:





ՉՔՆԱՂ ԵՐԱՉ

Դու ինձ համար սիրո աղբյուր,
Ես քեզ համար՝ գուցե ոչինչ:
Դու ինձ համար երազ մաքուր,
Ես քեզ համար՝ գուցե ոչինչ:
Չեովից՝ ես քեզ գու՛նե՛ տեսնեմ, սիրեմ,
Որպես կյանքիս ջընաղ երազ:
Արեգակին պետք է հեռվից՝ նայել,
Կայրի՛, եթե ջատ մոտենա:
Կյանքում դու միշտ ուրախ մնա,
Եւ միշտ եղիր պայծար ու քինջ:
Ամբողջ մի կյանք սիրով կտամ,
Ես քեզ համար՝ գուցե ոչինչ:
Չեովից՝ ես քեզ գու՛նե՛ տեսնեմ, սիրեմ,
Որպես կյանքիս ջընաղ երազ:
Արեգակին պետք է հեռվից՝ նայել,
Կայրի՛, եթե ջատ մոտենա:





56

57



